



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2020 թվականի N 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 324-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 22-ի N 20-Ա հրամանը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայասրանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատողների 2020 թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 324-Ա որոշման հավելվածը՝ (պաշտոնային դրույքաչափերը) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2020 թվականի փետրվարի 28
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

